4. ՍԸԵՐԸ

Ընում ա, չընում մին մադար տրղա յա ընում։ Էտ մագար տրղան հալա փրսակված չի ընում։ Հիշքան հարը, մարը ղաչանք ընանրմ, թա փրսակվի, փրսակվրմ չի, ասրմ ա. «Բաբ ախճիգ չի կա՞»։ Անց ա կրենրմ խիլլա վախտ։

Մին գոնրմ էլ էս տրղան Շուշի քաղաքին մին մրեծ քյուչով քյինելիս, էն մրեծ-մրեծ տրներին քյուչի բալկոններին մինին մրեչին մին ղաշանգյ, մարալի նրման ախճիգյ ա տրեսնրմ կաղնած, մին շատ կյեղեցիկ ախճիգյ։

Էտ տրղան ուրան մրթկրմը ասրմ ա. «Դուզ ա, Շուշի քաղաքին ըխճրկերքը լոխ էլ կյեղեցիկ ըն, ծրոքրճիրավ, տրնարար, մանները վրեսկե՞... Աշխարքիս էն ճրնգան կյամ ըն Շուշի-Ղտլիցը ախճիգյ օզրմ, տանրմ։ Հու վրեր էլ տանրմ ա, փրշմանրմ չի. տոնը վրեր տրեռտակ էլ ա ինրմ, լրցնրվում ա, ամմա էս իմ տրեսած ախճիգյրն օրիշ պրեն ա՞...»

Կյամ ա տոն, ասրմ.—Ա՛ մար, յրես մինչև մրհեկ օզացալ չրմ փրսակվիմ, ամմա մրհեգյ օզրմ ըմ։ Էս հինչ տրեզը մին ախճիգյ ըմ տրեսա՞լ, վրեր արևին ասրմ ա. «Տոնս մի կյալ, յրես ըմ տոնս կյալու», լունանրնգյին ասրմ ա. «Տոնս մի կյալ, յրես ըմ տոնս կյալու»։ Էտ ախճիգյը տուրրս ա եկալ։

Հարը նան մարը ուրխանրմ ըն։ Քյինրմ ըն էտ ախճիգյը օզրմ, պրերրմ ուրանց տոն, մին լավ հրրսանիք անրմ։

Էն մին քրշերը, վրեր տրղան թեքյ ա ընգնում էտ ըխճրկանը

Նրհետ, տրղան մուտընալան առաչ ասրմ ա.— Ցրես էրկու պրեն բիդի ասիմ քյրեզ, թա՞ համոզ ը՞ս, իմ կընեգյրս կինիս, թա՞ համոզ չրս, մունք կինինք հունց վրեր քյուր նան ախպեր։

Ախճիգյն ասրմ ա.— Ասի՛, տրեսնամ հի՞նչ ըս ասրմ։

Տրղան ասրմ ա.— Վրեր յրես մրեռնիմ, տու ըիդի փրսակվիս վրեչ, թա՞ տու մրեռնիս, ես ըիդի փրսակվիմ վրեչ։

Ախճիգյը համոզվում ա։

Քրշերավը լուսը ծրքյծրքյոտրելիս էտ տրղան մրեռնրմ ա։

Ընդրանա ետը էտ ախճիգյը ամուն օր կանուխ քրշերավը քյրնում ա երի հանգյիստը, էտ տրղին կյրրեզմանին յրան լաց ինում։ Ինքյն էլ փրսակվում չի՞։

Երի հանգյիստին տակավը մին շոսսե ճրնապար ա ինում։

Մին գոնրմ էտ ճրնապարավը մին պեխի ախպուրը քյրնող փայտոնչի լրսրմ ա էտ ըխճրկանը սոքյը նան շիվանը։

Էտ փայտոնչին ուրան հրնգյերին ասրմ ա.— Տրեսնաս էն հո՞ւ վա ինդի լաց ընում, քյինիմ, տրեսնամ։

Ամմա հրնգերն ասրմ ա.— Պրեն չանի՞ս, հրղետ քյինի՛, հու վրեր լաց ա ինրմ, թող լաց ինի, քյրեզ հի՞նչ։

Էտ տրղան համփերում չի, քյրնում ա, տրեսնրմ էտ ըխճրկանը, ըտրա կյեղեցիկ ինելան մաթ ա մրնրմ, ետ ա տրեռնրմ հրրցրնրմ, թա՞.—Ա՛յ ախճիգյ, էտ հո՞ւր հետի յրս իտի լաց ինրմ, մարրտ ա՞, թա՞ հա՞րրտ ա, քյո՞ւրրտ, ախպերրտ ա՞, թա՞ սիրածրտ։

Ախճիգյրն ասրմ ա.— Լաց ըմ ինրմ իմ սիրածիս հետի։ Էս ա օխտը տարի յա ամեն ըռավուտ կյամ ըմ ըստրեղ, լաց ինրմ։

Տրղան ասրմ ա.— Նհախ տրեղան ըս լաց ինրմ, տա շուտանց ա վրեղ տրեռալ, իտի մանիլ, թո՛ղ, քյինի մին օրիշ տրղի, մրղափուն ըս, ջահիլ ըս, էտ աշկերիտ լուսը եր մի ածիլ լաց ինելավ... Հալա սոքյ էլ ըս պահրմ սրեվ շորերրմ... Սրեվ գազը կըլխիտ...

Էտ ախճիգյն ասրմ ա.— Ցրես միչև իմ գյանքիս վրերչը իստի սոքյ ըմ պահելու։

Էտ տրղան ասրմ ա.— Սիրածրտ շուտի յա վրեղ տրեռալ, թա՞ հրվատրմ չը՞ս, պրեց անիմ տրես։

Էտ տրղան քյրնրմ ա մին թի պրերրմ, վրեղը քանդրմ, վրեսկուռնին պրեց անրմ։ Էտ ախճիգյը տրեսնրմ ա, մրնրմ կաղնած։ Ետավ էտ տրղան չոքրմ ա էտ ըխճրկանը առաչին, ասրմ.

— Ցրես քյրեզ մատաղ, բոյիտ մատաղ, շանիտ մատաղ, ցավրտ տանիմ, եք ինձ նրհետ փրսակվի, քյրեզ կըլխիս յրան կպահիմ, քյրեզ

թողել չըմ, վրեր մին մազըտ էլ ծըռվի, մինը քյըեզ խըեթ եշի։ Էտ ախճիգյը համոզվըմ ա էտ տըղին նըհետ փըսակվի։ Ամմա հըենց առաչի քըշերը պաչելանը ետը համ ախճիգյըն ա մըեռնըմ, համ տըղան։

Էրկուսին էլ մին տըեղ ըն թաղըմ, էն երի հանգիստըմը։